ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/6Շ

ք. Երևան **«09» սեպտեմբերի 2019թ.**

ՀՀ տարացքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Լիլիթ-87>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքների (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 տարի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 542 400 000 (հինգ հարյուր քառասուներկու միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 90 400 000 (իննսուն միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Վճարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Կողմերի միջև համաձայնագիր կնքելու միջոցով:
Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[30] .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ-ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի

---

[30] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[32]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[33]

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ,

---

[32] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[33] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքայի կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ կենտրոնական գանձապետարան ՀՎՀՀ 02578338 Հ/Հ 900011025823	«Լիլիթ-87» ՍՊԸ ՀՀ,Կոտայքի մարզ,գյուղ Զովունի,1 փողոց 127 «ԱյԴի Բանկ» ՓԲԸ, Կոմիտաս մ/ճ Հ/Հ 11811002425400 ՀՎՀՀ 01200017
/ստորագրություն/ Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված թիվ 1
«09» սեպտեմբերի 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/6Շ ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան, կմ13+500-կմ22+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

/ՀՀ հազ. դրամ/

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալը	Միավորի արժեքը *	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	I Հողային աշխատանքներ				
1	10^{e}-IV կարգի բնահողի մշակում և բարձում էքս.0,65մ^3 շ. տ. ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 3.0կմ	մ^3	1405.3	1.726	2 425.548
2	նույնը՝ ձեռքի աշխատանքով(մետ արգելափա-կոցների հատվածներում)	մ^3	229.6	6.677	1 533.039
3	10e-IV կարգի բնահողի մշակում և բարձում էքս. 0,65մ3 շ. տ. ա/ի վրա, տեղափոխում լիցք 1.0կմ	մ^3	257.7	1.427	367.738
4	10^{e}-IV կարգի բնահողի տեղափոխում լիցք բուլդոզերով 10մ (հարթեցում, ջրում, խտացում)	մ^3	257.7	0.862	222.137
	II Կողային առուների մաքրում				
1	10eIV կարգի բնահողի մշակում և բարձում էքս. 0.65մ^3 շ.տ. ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 3.0կմ	մ^3	2159.8	1.726	3 727.815
2	նույնը՝ ձեռքի աշխատանքով	մ^3	240.0	6.677	1 602.480
	III Կողնակ				
1	Կողնակների հարթեցում ավտոգրեյդերով	մ^2	42224.5	0.020	844.490
2	նույնը՝ ձեռքի աշխատանքով(մետ արգելափակոցների հատվածներում)	մ^2	2296	0.346	794.416
	IV Երթևեկելի մաս				
1	Ա/բ ծածկի ֆրեզում $h_{միջ}$=5սմ և վերադարձ սեփականատիրոջը	մ^2	73568.5	0.856	62 974.636
2	Փոսային նորոգում h=3-5սմ	մ^2	251	5.225	1 311.475
3	Փոսային նորոգում հիմքով. - խիճ h=8-16սմ բիտումի տարածումով 4,12տ/1000մ^2 - խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ^2	1507	10.721	16 156.547
4	Հարթեցնող շերտ ա/բետոնե խառնուրդով $h_{միջ}$=3սմ	տ	1296.54	47.120	61 092.965
5	Մանրահատիկ ա/բ h=5սմ	մ^2	73568.5	5.608	412 572.148
	V Իջատեղեր				
1	10eIV կարգի բնահողի քանդում էքս. 0,65մ^3 շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ^3	90.68	1.726	156.514
2	նույնը՝ ձեռքի աշխատանքով	մ^3	13.4	6.677	89.472
3	10eIV կարգի բնահողի քանդում էքս. 0,65մ^3 շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 1,0կմ	մ^3	30.0	1.429	42.870
4	Լիցքի իրականացում բուլդոզերով, ջրում, խտացում	մ^3	30.0	0.862	25.860
5	Մանրահատիկ ա/բ h=4սմ	մ^2	1 052.43	4.502	4 738.040

6	Խիճավազային հիմք h=12սմ (C-5),100մ2-ի համար՝ խիճ (40-70)-1.56մ3 խիճ (20-40)-5.46մ3 խիճ (10-20)-3.12մ3 խիճ (5-10)-1.56մ3 խիճ (0-5)-3.9մ3 (ավազ) ջուր-1.1մ3	մ^2	1052.43	1.263	1 329.219
7	Ավազակոպճային շերտ h=10սմ (մետ. խող. տակ)	մ^3	1.5	6.000	9.000
8	Խողովակի ջրամեկուսացում	մ^2	38.27	1.783	68.235
9	d=530 մմ խողովակի տեղադրում (7մմ)	գծմ	23	100.600	2 313.800
	VI Ջրահեռացում երթևեկելի մասից				
1	Գոյություն ունեցող հավաքովի Б-2-20-50, Б2-20-75 վաքերի և ջրթողերի մաքրում բերվածքներից , բարձում ա/ի վրա ձեռքով, տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ^3	20.2	6.677	134.875
2	10eIV կարգի բնահողի քանդում ձեռքի աշխատանքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ^3	6.94	6.677	46.338
3	Խճային հիմք h=10սմ	մ^3	2.58	5.400	13.932
4	Б-1-20-75 հավաքովի բետոնե բլոկների տեղադրում (20 հատ)	մ^3	2.88	187.500	540.000
5	Б-2-40 հավաքովի բետոնե բլոկների տեղադրում 8 հատ ամրան Ф10А-I	մ^3	0.272	170.910	46.488
6	Б-5 հավաքովի բետոնե բլոկների տեղադրում (8 հատ)	մ^3	0.632	214.300	135.438
7	Ջրթողի բետոն В20	մ^3	1.2	74.790	89.748
	VII Նշագծում				
1	Նշագծման ընդհանուր մակերեսը այդ թվում՝ հոծ գիծ 1.1 - 307 մ^2 ընդհատվող գիծ 1.5 - 119.75 մ^2 ընդհատվող գիծ 1.6 - 57 մ^2 ընդհատվող գիծ 1.7 - 14 մ^2 հոծ գիծ 1.2.1 - 1697.5 մ^2 ընդհատվող գիծ 1.2.2 - 27.5 մ^2	մ^2	2222.75	0.548	1 218.067
	VIIIՆշաններ				
1	Նոր ճան. նշանների տեղադրում	հատ	90	32.836	2 955.240
2	Ճան. նշանների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	հատ	20	4.600	92.000
	IX Արգելափակոցներ				
1	Մետ. արգելափակոցների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	246	2.000	492.000
2	Նոր մետաղական արգելափակոցների տեղադրում d=4մմ	գծմ	390	24.270	9 465.300
3	Ե/բ ուղղորդ սյունների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	հատ	7	4.270	29.890
4	Նոր ազդանշանային C1 տիպի պլաստիկ սյուների տեղադրում	հատ	127	5.846	742.442
5	Գոյություն ունեցող ե/բ ուղղորդ սյունների ներկում	մ^2	11	0.716	7.590
	X Վերին հենապատ				
1	10eIVկարգի բնահողի քանդում բարձում ձեռքով ա/ի վրա տեղափոխում լցակույտ 3կմ հեռավորության վրա (հենապատի հետևի հատվածում)	մ^3	157.5	6.677	1 051.628

2	Գոյություն ունեցող հենապատի բարձրացում միաձույլ բետոն B20	մ³	23.625	69.578	1 643.780
3	Պատի աճեցման համար անցքերի գայլիկոնում և խարիսխների տեղադրում 12 A 500C - 100.8 կգ	հատ	210	1.266	265.860
4	Մետաղական ցանցի ամրացում հենապատին 0,2x0,2մ Φ5մմ Bp	մ²	294.25	1.340	394.295
5	Պատի վրա ցանցի համար անցքերի գայլիկոնում և խարիսխների տեղադրում 12 A 500C - 282.48 կգ	հատ	1177	1.350	1 588.950
6	Իրանի շապիկի միաձույլ բետոն B-20 -հմիջ.=15սմ	մ³	44.14	82.373	3 635.944
	XI Ե/բ d=1.0մ խողովակների նորոգում				
1	Հունի մաքրում մուտքում, ելքում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 3կմ հեռ. վրա	մ³	15.7	6.677	104.829
2	Գլխադիրի կառուցում մուտքում և ելքում միաձույլ բետոնից B20	մ³	1.8	69.578	125.240
3	Մուտքում եզրապատի նորոգում միաձույլ բետոնից B20	մ³	3.06	69.578	212.909
	XII Ե/բ ուղղանկյուն խողովակների նորոգում				
1	Հունի մաքրում մուտքում, ելքում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 3կմ հեռ. վրա	մ³	16.2	6.677	108.167
2	Նույնը՝ խողովակի մեջ	մ³	111.9	6.677	747.156
3	Հունի մաքրում մուտքում , 10e-IV կարգի բնահողի մշակում և բարձում էքս.0,65մ3 շ. տ. ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 3.0կմ	մ³	285	1.726	491.910
4	Հող. աշխ-ներ ձեռքի աշխատանքով , բարձում ա/ի տեղ. լցակույտ 3կմ (ուղղորդ թների և եզրապատերի կառուցման համար) - 10e-IV	մ³	8.46	6.677	56.487
5	Նույնը՝ կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ³	2.24	5.090	11.402
6	Ավազակոպճային նախապատրաստում h=10սմ	մ³	1.8	6.000	10.800
7	Մուտքում գլխամասի քայքայված բետոնե ուղղորդ թների իրանի քանդում ձեռքի աշխատանքով , բարձում ա/ի և տեղ. լցակույտ 3կմ	մ³	3.6	63.370	228.132
8	Գլխամասի ուղղորդ թների իրանի կառուցում միաձույլ բետոնից B20	մ³	4.5	69.580	313.110
9	Ելքում քայքայված բետոնե եզրապատի քանդում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղ. լցակույտ 3կմ	մ³	1.0	63.370	63.370
10	Ելքում վաքի կառուցում միաձույլ բետոնից B20	մ³	5.4	84.245	454.923
11	Մուտքում եզրապատի սվաղում ցեմենտավազային շաղախով 5սմ հաստությամբ	մ²	7.94	3.317	26.337
12	Գլխամասի եզրապատի կառուցում միաձույլ բետոնից B20	մ³	7.72	112.550	868.886
13	Հետադարձ լիցք ձեռքի աշխատանքով	մ³	2.24	1.741	3.900
14	Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով - բետոն	մ²	15.0	1.224	18.360
				Ընդամենը	602 834.167

*Միավորի արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» ՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Լիլիթ-87» ՍՊԸ
ՀՀ,Կոտայքի մարզ,գյուղ Զովունի,1 փողոց
127
«Այդի Բանկ» ՓԲԸ, Կոմիտաս մ/ճ
Հ/Հ 11811002425400
ՀՎՀՀ 01200017

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
«__» սեպտեմբերի 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/6Շ ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան, կմ13+500-կմ22+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարման

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
1	Հողային աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 40 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
2	Կողային առուներ և կողնակներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 55 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
3	Երթևեկելի մաս	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 85 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
4	Իջատեղեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 90 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
5	Ջրահեռացում երթևեկելի մասից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 50 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
6	Վերին հենապատ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 65 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
7	Ե/բ խողովակների նորոգում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 45 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
8	Անվտանգության էլեմենտներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338

Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Լիլիթ-87» ՍՊԸ ՀՀ,Կոտայքի մարզ,գյուղ
Զովունի,1 փողոց 127
«Այդի Բանկ» ՓԲԸ, Կոմիտաս մ/ճ
Հ/Հ 11811002425400
ՀՎՀՀ 01200017

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 4
«09» սեպտեմբերի 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/6Շ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«09» սեպտեմբեր 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/6Շ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
09.09.2019թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/6Շ պետական գնման պայմանագրի

ք. Երևան **<< 16 >> հոկտեմբերի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Լիլիթ-87>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 2019թ. սեպտեմբերի 12-ի թիվ 1184-Ն և 1209-Ա որոշումների և հիմք ընդունելով Կողմերի միջև 09.09.2019թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/6Շ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին.

1.1 Հաստատել Համաձայնագրի 2019թ. Վճարման Ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Լիլիթ-87» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Զովունի, 1 փողոց 127
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«ԱյԴԻ Բանկ» ՓԲԸ Կոմիտաս մ/ճ
ՀՎՀՀ 02578338	ՀՎՀՀ 01200017
ՀՀ 900011025823	ՀՀ 11811002425400
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/6Շ գնման պայմանագրի
«_16_» հոկտեմբերի 2019թ. կնքված
Թիվ _2_ Համաձայնագրով
Հավելված թիվ 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Մ-8, վանաձոր (Մ-6 հատման կետ)– Դիլիջան, կմ13+500 – կմ22+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

(ՀՀ դրամ)

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	45231177/72	Մ-8, վանաձոր (Մ-6 հատման կետ)– Դիլիջան կմ13+500 – կմ22+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ										542400000	542400000	542400000	**542400000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
ՀՀ 900011025823

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
«Լիլիթ-87» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Զովունի, 1փողոց
127
«ԱյԴԻ Բանկ» ՓԲԸ Կոմիտաս մ/ճ
ՀՎՀՀ 01200017
ՀՀ 11811002425400

/ստորագրություն/